

Gender Gap Index-2015՝ Հայաստանը 105-րդ տեղում է



Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից չորս առաջնության ոլորտներում (տնտեսություն, քաղաքականություն, կրթություն և առողջապահություն) հաշվարկվող Գենդերային ճեղքվածքի ցուցանիշով (Gender Gap Index) Հայաստանը 2015 թ. 145 երկրների շարքում 105-րդ հորիզոնականում է, ընդ որում, քաղաքական պաշտոններում ներկայացվածության առումով Հայաստանը 125-րդ հորիզոնականում է:

Կանայք և կայուն զարգացման օրակարգը CSW 60



Մարտի 14-24-ը Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնակայանում կայացավ Կանանց կարգավիճակի համաժողովի (CSW) հոբելյանական 60-րդ նստաշրջանը, որի առանցքային թեման էր՝ «Կանանց հնարավորությունների ընդլայնումը Կայուն զարգացման օրակարգի համատեքստում»: Այն միտված էր բացահայտելու կանանց առաջընթացի ու կայուն զարգացման օրակարգի միջև անմիջական կապը՝ ցույց տալով, որ առանց կանանց լիարժեք մասնակցության զարգացման մասին խոսելն անիմաստ է:

«Մոլորակ 50/50 մինչև 2030»-ինչ է պարտավորվել Հայաստանը



2015-ի սեպտեմբերի 27-ին Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնակայանում տեղի ունեցած Համաշխարհային լիդերների հանդիպմանը ՄԱԿ-ի անդամ պետությունները, այդ թվում՝ Հայաստանը, պարտավորություններ վերցրեցին՝ պայմանավորվելով համատեղել իրենց ջանքերը «Մոլորակ 50/50 մինչև 2030» տեսլականի շուրջ: Հայաստանի ստանձնած պարտավորություններում նշված է, որ պետությունը պարտավորվում է աջակցել 2013-ին ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի իրականացմանը և ստորագրել եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին կրկնվեցիան (Ստամբուլի կրկնվեցիան): Նշենք, որ բարձր մակարդակի այս հանդիպումը նվիրված էր Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի 20-ամյակին և տեղի էր ունեցել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հոբելյանական 60-րդ նստաշրջանի շրջանակներում, որի ընթացքում սեպտեմբերի 25-ին պաշտոնապես ընդունվեց նաև Կայուն զարգացման նոր օրակարգը:

Կիրև և քաղաքականությունը

ՀՀ Ընտրական օրենսգիրքինչն է մտահոգում կանանց



Էջ 2-3

2016 մաս

Անվճար հավելված www.WomenNet.am

200 տարի կոդահանջվի Ազգային ժողովում հավասարության հասնելու համար

1995-ից՝ Ազգային ժողովի առաջին գումարումից, մինչև 2015 թվականը կանանց թիվը խորհրդարանում 6%-ից հասել է 10%-ի, այն էլ՝ շնորհիվ կիրառվող քվոտաների: Հաշվի առնելով ԱԺ հինգ գումարումների ընթացքում կանանց ներկայացվածության արձանագրված տեմպերը՝ կարող ենք ենթադրել, որ Ազգային ժողովում կանանց ու տղամարդկանց հավասար ներկայացվածության հասնելու համար մեզ կպահանջվի առնվազն 200 տարի: Իսկ աշխարհի խորհրդարաններում այսօր արդեն իսկ առկա կանանց 23 տոկոսանոց ներկայացվածության մենք լավագույն դեպքում կհասնենք 50 տարի հետո:

Մնում է միայն զինվել համբերությամբ, քանզի քաղաքական այրերը, իրենց իսկ դիտարկմամբ՝ «շտապելու խնդիր չունեն», և նրանց, կարծես թե, քիչ է մտահոգում այն փաստը, որ Հայաստանի բնակչության 52 տոկոսը կազմող կանայք օրենսդիր մարմնում այսօր ունեն ընդամենը 10% ներկայացվածություն:



Ողջ աշխարհում երկրների առաջընթացն անմիջականորեն կապվում է որոշումների ընդունման մակարդակում կանանց պատշաճ ներկայացվածության հետ: Եվրոպական կառույցները դեռ տասը տարի առաջ էականորեն բարձրացրեցին կանանց մասնակցության նշանը՝ խորհուրդ տալով կուսակցություններին իրենց համամասնական ցուցակներում ընդգրկել առնվազն 40% կանայք, այն էլ ապահովելով կանանց և տղամարդկանց թեկնածուներին հաջորդականությունը: 2011 թվականին ՀՀ գեներային քաղաքականության ռազմավարական ծրագրով (2011-2015 թթ.) ՀՀ Կառավարությունը նախատեսեց «ձեռնարկել հատուկ միջոցներ ապահովելու կանանց 30% ներկայացվածությունն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների որոշումների ընդունման մակարդակներում»: Ու թեպետ այս կետը իրագործել չհաջողվեց, ՄԱԿ-ն այդ ընթացքում ավելի հավակնոտ տեսլական առաջ քաշեց՝ մինչև 2030 թվականը 50/50 մասնակցային բանաձևը, որը տեղ գտավ նաև կայուն զարգացման օրակարգում:

Հաշվի առնելով այն, որ մինչև 2030-ը Հայաստանում առնվազն 3 խորհրդարանական ընտրություններ են սպասվում, ակնհայտ է դառնում, որ հավասարությանը հասնելու համար պետք է արագացնել ընթացքը՝ ապահովելով Ազգային ժողովի կազմում կանանց առնվազն 30%-անոց ներկայացվածությունը: Հենց այս նվազագույն շեմն է դրված նոր Ընտրական օրենսգրքի նախագծի շուրջ ներկայացվող մի շարք առաջարկների հիմքում: Ազգային ժողովում առնվազն 30/70 համամասնությունն ապահովելու առաջարկվել են համընդհանուր և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և փորձագետների, Համալսարանական կրթության կանանց ասոցիացիան իր մարզային մասնաճյուղերով, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, ինչպես նաև Հանրային խորհրդի երկու համաձայնագրվածները:

Ինչն էլ հատկապես շեշտադրվում կանանց մասնակցության 30-տոկոսանոց պահանջը: Դրա հիմքում դրված է պառլամենտարիզմի համաշխարհային փորձը, ըստ որի որոշումների կայացման մշակույթի վրա իրենազդեցիկ է քաղաքական խաղի կանոնները բարեփոխելու, քաղաքականությունն ավելի հումանիստական դարձնելու հնարավորությունն ի հայտ է գալիս միայն այն դեպքում, երբ ապահովված է կանանց ներկայացվածության «կրիտիկական զանգվածը», այսինքն՝ կանայք կազմում են խորհրդարանի ոչ պակաս, քան 30%-ը:

Այլ հարց է՝ որքանով է այսօրվա կուսակցական վերնախավը պատրաստ մնալ կտրուկ շրջադարձի: Քաղաքական այրերը մտահոգություն են հայտնում, որ կուսակցությունները չեն կարողանալ ապահովել քվոտային համապատասխան կին թեկնածուների արժանի որակ և առաջ են քաշում «Լավ է քիչ, բայց լավ» սկզբունքը: Մինչդեռ բարձրագույն կրթությամբ կանանց տոկոսը մեր երկրում գերազանցում է տղամարդկանց, ու կարելի է չկասկածել, որ նրանց թվում քիչ չեն խելացի և ակտիվ կանայք, ովքեր ունակ են հաջողությամբ աշխատելու խորհրդարանում: Իսկ եթե մնա կանայք չկան կուսակցություններում, ապա դա կուսակցությունների խնդիրն է: Այս առումով, գուցե քվոտաներն ստիպեն նաև քաղաքական մտահոգվել որակյալ քաղաքական կադրերի նախապատրաստման խնդրով և ձերբազատվել ընտրական ցուցակներում «ոչ իրական թեկնածուների» ներգրավման գործելաոճից: Բացի այդ, «Լավ է քիչ, բայց լավ» սկզբունքը հավասարապես վերաբերում է նաև տղամարդկանց, որոնց թիվը քաղաքականությունում ոչ մի կերպ որակ չի դառնում...

Լրագրողական մրցույթ

«Հասնենք հավասարության. կանանց փառափախ մասնակցության շեղանակները»

«ՕՔՍՖԱՍ» միջազգային կազմակերպությունը և «ՕքսեՆ» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամը «ՀԱՎԱՍԱՐ» քարոզարշավի շրջանակում հայտարարում են լրագրողական նյութերի մրցույթ

«Հասնենք հավասարության. կանանց քաղաքական մասնակցության տեսլականը» թեմայով, որի առանցքային խորագրերն են.

- «Քաղաքականությունը կանանց գործն է. խոչընդոտներ և լուծումներ»,
- «Հաջողության բանաձև. կանանց տնտեսական ձեռքբերումների դեպի քաղաքական մասնակցություն»,
- «Կանայք ՏԻՄ ընտրություններում. մրցակազմի առանձնահատկությունները»:

Մրցույթին կարող են մասնակցել լրագրողներ, քաղաքացիական ակտիվիստներ, հանրային թղթակիցներ, բլոգերներ ՀՀ ողջ տարածքից: Նյութերը պետք է տպագրված, հեռարձակված կամ առցանց տեղադրված լինեն 2016 թ. հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը:

Լավագույն աշխատանքները կարժանանան մրցանակների, որոնք սահմանվելու են երեք անվանակարգերում՝ «Ռադիո-հեռուստատեսային նյութ», «Տպագիր հոդված», «Առցանց հոդված»: Հայտերն ընդունվում են մինչև նոյեմբերի 5-ը ներառյալ:


Մրցույթի հետ կապված բոլոր մանրամասները «ՀԱՎԱՍԱՐ» քարոզարշավի ֆեյսբուքյան էջում:

Հարցերի համար կարող եք դիմել մրցույթի համակարգող Գոռ Պետրոսյանին՝ academyoffamily@gmail.com էլ. հասցեով կամ 091 510 410 հեռախոսահամարով:



Թվեր եւ փաստեր


Կանայք ու տղամարդիկ Ազգային ժողովում



Հատկանշական է, որ 20 տարվա ընթացքում՝ Ազգային ժողովի հինգ գումարումների արդյունքում կանանց ներկայացվածությունն աճել է ընդամենը 4%-ով: Այդ նույն ժամանակահատվածում կանանց միջին թիվը աշխարհի խորհրդարաններում ավելի քան կրկնապատկվել է՝ 11%-ից մինչև 23%:

Կին պատգամավորների որակի մասին է վկայում այն համագամանքը, որ աճել է կանանց թիվը ՀՀ Ազգային ժողովի ղեկավար կազմում. նրանք այսօր ղեկավարում են Աժ խմբակցությունների ուղիղ կեսը, ներկայացված են 2 փոխխոսակցներից մեկի պաշտոնում, գլխավորում են 12 մշտական հանձնաժողովներից 2-ը:

Ի՞նչ արժի գեներային հավասարությունը



Ըստ հետազոտական և խորհրդատվական McKinsey&Co ընկերության վերջերս հրատարակած զեկույցի՝ լիարժեք գեներային հավասարությունը կարող էր ավելացնել 26% կամ 28 տրիլիոն դոլար համաշխարհային համախառն ներքին արդյունքին մինչև 2025 թ.-ը: Նշենք, որ համաշխարհային ՀՆԱ-ի 28%-ով ավելացումը մոտավորապես համարժեք է Ամերիկայի և Չինաստանի տնտեսություններին միասին վերցրած:

Ի՞նչ կորուստներ է կրում Հայաստանը գեներային անհավասարության պատճառով

Կանանց աշխատանքի սահմանափակման և նրանց նկատմամբ աշխատանքի շուկայում գոյություն ունեցող խտրականության հետևանքով Հայաստանի ՀՆԱ-ն տարեկան 50-60 մլն դոլար է կորցնում: Այսպիսի եզրակացության են հանգել փորձագետները՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի նախաձեռնությամբ 2015-2016 թթ. Հայաստանում անցկացրած «Կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրության» արդյունքներով: Ըստ էության, Հայաստանում դա առաջին փորձն է գնահատելու երկրի տնտեսությունում գեներային անհավասարության պատճառով առաջացող կորուստները:

Հարցվածների 81%-ի կարծիքով անհավասարությունն ակնհայտ է

«Հայաստանի գեներային բարոնետը» հետազոտության (2015) շրջանակներում հարցվածների միայն 8,3%-ն է համարում, որ մեր հասարակությունում չկա անհավասարություն կանանց և տղամարդկանց միջև: 81%-ի կարծիքով՝ Հայաստանում կա գեներային անհավասարություն, ընդ որում, կանանց և տղամարդկանց կարծիքների միջև այս հարցի շուրջ էական տարբերություն չկա:

Որպես գեներային անհավասարության պատճառ հարցվածների մեծ մասը մատնանշում է կանանց իրավունքների մասին իրազեկվածության ցածր մակարդակը: Այդպես է կարծում հարցված կանանց 59,7%-ը և տղամարդկանց 44,2%-ը:

Հարցումն անցկացվել է հանրապետության ողջ տարածքում Գեներային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնի կողմից:

Խորհրդարանական լսումներ

Ընտրական օրենսգրքի. ինչն է մտահոգում կանանց

«Ես նմանեցնում եմ մեր հասարակությունում տիրող իրավիճակը մի ընտանիքի հետ, որում բացակայում է մայրը: Արդյունքում՝ ունենք մեծ բնակարան, որը կեղտոտ է, մաքրվում է լավագույն դեպքում ամիսը մեկ, ընտանիքի մեծ ու ավելի ճարպիկ երեխաները խլել են ավելի փոքրերի հացը և, ժողովրդի լեզվով ասած՝ չաղ ու բախտավոր են, իսկ մյուսները, ովքեր ավելի թույլ են, թափառական են դարձել աշխարհով մեկ: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս մորը վերադարձնել ընտանիքին», - այսպիսի հարցադրմամբ հանդես եկավ Ազգային ժողովում մարտի 22-ին կայացած մոր Ընտրական օրենսգրքի նախագծի շուրջ խորհրդարանական լսումների մասնակից «Ներուժ» ԳԿ նախագահ ժամանա Ղևոնդյանը՝ առաջարկելով կանանց ու տղամարդկանց 50/50 համամասնություն սահմանել կուսակցությունների ընտրական ցուցակներում, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ կանայք և տղամարդիկ իրավահավասար են: Նշենք, որ լսումների ընթացքում սա միակ ելույթը չէր ընտրական գործընթացներում կանանց մասնակցության ընդլայնման խնդրի վերաբերյալ...



«Կանանց մասնակցությունն ընդլայնելու հարցը մեր ուշադրության կենտրոնում է, աշխատում ենք»

Այս խնդրի շուրջ ելույթ ունեցող բանախոսների միասնական մտահոգությունն այն էր, որ Ընտրական օրենսգրքի նախագծով կանանց մասնակցության որևէ ընդլայնում չի նախատեսվում, մինչդեռ փակ և բաց համամասնական ցուցակների ներդրումը կարող է հանգեցնել Ազգային ժողովում կանանց թվի կտրուկ նվազեցման: Ի պատասխան դրան՝ ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը նշեց, որ այս հարցը արդեն իսկ արժանացել է իրենց ուշադրությանը, քանի որ նման դիտարկումներ ստացել են այլ կազմակերպություններից և, և դրանց վրա ներկայումս աշխատում են:

«Դեռևս չունենք պատրաստի լուծումներ, բայց վստահեցնում եմ ձեզ՝ հարցը մեր ուշադրության կենտրոնում է, աշխատում ենք: Տեսնենք, թե ինչ վերջնական լուծում կգանք, քանի որ աշխատանքային խմբում մեր մեջ էլ կա բանավեճ, բայց վստահեցնում եմ, որ ինչ-որ լուծումների գալու ենք», - ասաց նա:

Հայաստանի միջազգային պարտավորությունների, մասնավորապես, ՄԱԿ-ի կողմից առաջարկվող մինչև 2030 թվականը 50/50 մասնակցային բանաձևի մասին դիտարկման առնչությամբ Դավիթ Հարությունյանը նշեց, որ նման պահանջներ դնելու հնարավորությունն այս պահին չի տեսնում, և կարևոր է, որ պահանջը ոչ թե արհեստական, այլ բնականոն ծագի, և այսօր իրատեսական է շարժվել քայլ առ քայլ և խոսել նվազագույն սահմանագիծը դնելու մասին: «Այս հարցում խնդիր կանանց ռեսուրսն ու պոտենցիալը չօգտագործելն է, ինչը, իմ կարծիքով, առնվազն ոչ խելամտու-

թյուն է: Կրկնում եմ՝ նվազագույն պահանջ պետք է ֆիքսենք, բայց դրա նպատակը ոչ թե ինչ-որ սահմանագիծն է, այլ կանանց ներկայացվածությունը քաղաքականության մեջ ապահովելը», - նշեց նախարարը:

«Արդյոք մեզ պատի՞վ է բերում, որ 866 գյուղական համայնքներից միայն 18-ն են կանայք ղեկավարում»

Անդրադառնալով կուսակցությունների ցուցակներում կանանց և տղամարդկանց համամասնության խնդրին՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Ջեննա Հասարյանը նշեց, որ բազմաթիվ երկրներում որպես հիմք են օգտագործում այն համագամանքը, թե ինչպիսին է կանանց և տղամարդկանց տեսակարար կշիռը երկրում, և ըստ

Փորձագետի կարծիք

Արդյո՞ք նրանք չեն ցանկանում առաջադրվել ընտրություններում



Բաց և փակ ցուցակներով կանանց ընտրվելու շանսերը

Վերլուծելով փակ և բաց համամասնական ցուցակներով կանանց ընտրվելու շանսերը՝ Վենետիկի փորձագետները նշում են գեկույցում, որ փակ ցուցակների պարագայում ամեն ինչ կախված է կուսակցություններից. «Եթե կուսակցություններն ընդգրկում են կանանց ցուցակի առաջնային դիրքերում, ապա կանանց ներկայացվածությունն ընտրված մարմնում դրա շնորհիվ էականորեն բարձրանում է: Եթե նրանք իրաժարվում են դա անելուց, ապա կա հավանականություն, որ կանայք կլինեն թերի ներկայացված խորհրդարանում», - փաստում են փորձագետները:

Ինչ վերաբերում է բաց կամ ազատ ցուցակներին, ապա գեկույցում նշվում է, որ ընտրողները պարտադիր չէ, որ ընտրեն երկու սեռի թեկնածուների, ընդհակառակը, բաց ցուցակները կարող են նպաստավոր լինել հայտնի թեկնածու տղամարդկանց համար. այսպիսով, դա ստեղծում է վտանգ, որ բաց ցուցակների ներդրումը կարող է հանգեցնել ավելի քիչ թվով կանանց ընտրության:

Սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, բաց ցուցակները կարող են և չխոչընդոտել կանանց

Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական համակարգերի՝ քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության վերաբերյալ» զեկույցում (2009) հատուկ անդրադարձ է կատարվում այս խնդրին: Պարզվում է՝ «կանայք չեն ցանկանում քաղաքականություն մտնել» կամ «կանայք չեն ցանկանում առաջադրվել ընտրություններում» փաստարկները, որոնց օգնությամբ քաղաքական գործիչները սովորաբար բացատրում են իրենց դժվարությունը կանանց առաջադրման համար լրացուցիչ հնարավորություններ ստեղծելու վերաբերյալ, տարածված են ոչ միայն մեզանում:

«Ընդհանուր առմամբ, կանանց՝ ընտրություններում առաջադրվելու ցանկությունը ամրապնդվում է բարենպաստ սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական պայմանների շնորհիվ, ինչպես նաև կուսակցությունների և քաղաքացիական հասարակության, հատկապես կանանց շարժման, աջակցության շնորհիվ: Եթե խոսենք ռազմավար մոտեցման մասին, կանանց ընտրվելու անձնական ձգտումները կարող են նաև կախված լինել այն հավանականությունից, որ առաջադրվելու դեպքում նրանք կընտրվեն: Ընտրական համակարգը և գեներային թվաքանակը կարող են ազդել այդ հավանականության և, հետևաբար, կանանց՝ ընտրություններին առաջադրվելու որոշման վրա», - նշվում է զեկույցում:

ներկայացվածությունը: Սա, Վենետիկի փորձագետների կարծիքով, կախված է նրանից, թե որքանով են կանայք տվյալ հասարակությունում պատրաստ ինքնակազմակերպվելու և կին թեկնածուներին ակտիվորեն աջակցելու:

Ժամանակավոր հատուկ միջոցների արդյունավետությունը

Քվտանների կամ ինչպես ընդունված է ավելի կոնկրետ անվանել՝ «Ժամանակավոր հատուկ միջոցների» արդյունավետության ամենակարևոր նախապայմաններից են համարվում կանանց շարժման ակտիվությունը, պատրաստությունը աջակցությունը և կուսակցությունների պատասխանատվությունը...

Ինչու 2012-ի ընտրություններում կուսակցությունների ընտրական ցուցակներում մոտ 23% կին թեկնածուներ էին ընդգրկված, սակայն խորհրդարան անցած կանանց թիվը չգերազանցեց 10,7%-ը (այժմ արդեն՝ 10%): Տեղական փորձագետների գնահատականներով՝ դա կատարվեց ներկուսակցական նկատառումներով արված տեղափոխումների և ինքնաբացարկների արդյունքում, որոնք շատ դեպքերում հանրության համար անհասկանալի մնացին: Այս հարցի կապակցությամբ

ԵԱՀԿ/ԺՄՄԻ դիտորդական առաքելության 2012-ի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցում նշվեց, որ «թեկնածուների առաջադրման քվտային արդյունավետությունը պետք է վերանայվի»: ՀՀ ԿԸՀ-ի տվյալներով՝ ընտրություններից հետո խորհրդարան անցած կուսակցությունների ցուցակներից ինքնաբացարկի դիմած թեկնածուների 25 տոկոսը կանայք էին: Ի տարբերություն տղամարդկանց, որոնք ինքնաբացարկի էին դիմել հիմնականում գործադիրում բարձր պաշտոնի անցնելու պատճառով, կանանց մեծ մասը պատգամավորությունից իրաժարվելու իրական պատճառների մասին գերադասում էր չխոսել: Եվ այստեղից միայն մեկ եզրակացության կարելի է հանգել՝ եթե տվյալ անձը չի կարողանում համոզվել հիմնավորել իր որոշումը, նշանակում է՝ այն ընդունել են առանց իրեն հարցնելու: Իսկ եթե կուսակցությունն է նման որոշում կայացնում, համարելով, որ այդ կանայք արժանի չեն պատգամավոր դառնալու, ապա հարց է ծագում՝ ինչու են նրանք համաձայնվում իրաժարվելու կուսակցական տալու հեռանկարով մտնել ցուցակի մեջ:

Նշենք, որ քվտավորման շրջանակում կանանց հատկացվող տեղերը պահպանելու մասին առաջարկներն այսօր Ընտրական օրենսգրքի վրա աշխատող խմբի սեղանին են:

Խորհրդարանական լսումներ

այդն ներկայացնում կանանց և տղամարդկանց համասնությունը ցուցակներում: Բացի այդ, հաշվի են առնում նաև թեկնածուների ինտելեկտուալ ռեսուրսը:

«Այսօր Գայատիանուս բարձրագույն կրթություն ունեցող ամենացածր թվում կանայք 60 տոկոս են կազմում, և չօգտագործել այս ռեսուրսը, մեղմ ասած, ճիշտ չէ: Համոզված եմ՝ այս ուղղությամբ հարկավոր է լուրջ մտածել ու համապատասխան քայլեր ձեռնարկել»,- հայտարարեց նա՝ տեղեկացնելով, որ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան համարապետության բոլոր մարզերում իր մոտ երեք տասնյակ մասնաճյուղներով և մեկ տասնյակից ավելի այլ ՀՀ-ների հետ միասին առաջարկներ է ներկայացրել կանանց մասնակցությունն օրենսդիր մարմնում և ՏԻՄ համակարգում բարձրացնելու ուղղությամբ:

Բանախոսը նաև հիշեցրեց, որ համարապետության նախագահ Սերժ Սարգսյանը մարտի 8-ի կապակցությամբ իր ուղերձում ասել էր, որ «այժմ մեր երկրում կանայք շատ ավելի մեծ դեր ունեն, քան ունեցել են երբևէ, և Սահմանադրության բարեփոխումների գործընթացը այս միտումն ավելի է խորացնելու»:

«Եթե դուք համաձայն եք մեր երկրի նախագահի հետ, ուրեմն եկեք օրենսդրական դաշտում տեսնենք, թե ինչպես կարող ենք հասնել այդ նպատակին: Արդյոք մեզ պատի՞վ է բերում, որ 866 գյուղական համայնքներից միայն 18-ն են կանայք ղեկավարում: Արդյոք ճի՞շտ է, որ մեր 48 քաղաքային համայնքներում ընդամենը 32 ավագանի կին ունենք, և այնպիսի մեծ քաղաքներում, ինչպիսիք են՝ Արմավիրը, Վաղարշապատը, Արմավիրը, Հրազդանը, որտեղ 40 հազարից ավելի բնակչություն ունենք, իսկ ավագանիում ոչ մի կին չունենք: Ես չեմ հասկանում՝ ինչպե՞ս են այդ ավագանիները հավաքվում ու քննարկում սոցիալական, կրթական նշանակության և այլ հարցեր, որոնցում կանայք մի փոքր ավելի իրազեկ կարող են լինել ու ճիշտ լուծումներ առաջարկել»,- նշեց Ջ.Հասարթյանը, հույս հայտնելով, որ տղամարդիկ բարյացակամ կզտնվեն քաղաքականության մեջ կանանց մասնակցությունն ընդլայնելու հարցում:

«Ազգային ժողովում կանանց թվի նվազեցման վտանգ է նկատվում»

Կանանց քաղաքական մասնակցության ընդլայնման վերաբերյալ Գեոգրեային թեմատիկ խմբի առաջարկները հնչեցրեց **Թամարա Հովնաթանյանը** («ՊրոՄեդիաԳեոգրե» ՀԿ նախագահ): Նա նշեց, որ խումբը, քննարկելով Ընտրական օրենսգրքի նախագիծը, ռեալ վտանգ է նկատել Ազգային ժողովում կանանց թվի նվազեցման առումով: Դրան, խմբի կարծիքով, կարող է հանգեցնել նախագծով առաջարկվող կուսակցությունների համապետական և տարածքային ցուցակների մոդելի կիրառումը: Այս միտումը կանխելու նպատակով խումբը հանդես է եկել առաջարկներով, որոնք ուղղված են կանանց ներկայացվածության ընդլայնմանը: Մասնավորապես, առաջարկվում է փոփոխության ենթարկել կու-

«Եթե Սահմանադրությամբ կինը և տղամարդը իրավահավասար են, ուրեմն եկեք սկսենք իրազործել դա կուսակցությունների ցուցակներից»

ժամենա Ղևնդյան «Ներուժ» ՀԿ նախագահ

սակցությունների համապետական և տարածքային ընտրական ցուցակներին վերաբերող 84-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվող դրույթը, ամրագրելով, որ համապետական ընտրական ցուցակի առաջին երկու տեղերը հատկացվեն տարբեր սեռի ներկայացուցիչներին, և այնուհետև 3-րդ համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը: Նույն հոդվածի 9-րդ կետով առաջարկվում է, որ տարածքային ընտրական ցուցակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը նույնպես չգերազանցի 70 տոկոսը:

Ինչպես պարզաբանեց բանախոսը, համապետական ցուցակի համար առաջարկվող հեր-

թականությունը հնարավորություն կտա առաջին անգործիկ հնգյակում ունենալու առնվազն երկու կին և դրանով իսկ խուսափելու այն իրավիճակից, որ ստեղծվել էր նախորդ ընտրությունների ժամանակ օրենքով ամրագրված ձևակերպման պատճառով, այն է՝ որ կանայք պետք է ընդգրկվեն 2-րդ համարից սկսած և ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11 և այլն):

«Փորձը ցույց տվեց, որ 2-6-րդ դիրքերում կանանց ընդգրկելու դրույթը խտրականության հիմք է հանդիսացել և փաստորեն զրկել է կանանց առաջին հնգյակում ներկայացված լինելուց: Կուսակցությունների մեծ մասը մերգրավեց կանանց 6-րդ տեղից սկսած, և 2012-ին նրանց թիվն անցողիկ հնգյակներում չորս անգամ պակաս էր 2007-ի ընտրությունների համեմատ, երբ մասն ճորմը բացակայում էր: Արդյունքում մենք ունենք խորհրդարանում կուսակցություն, որը Ազգային ժողով է մտել առանց կանանց ներկայացվածության, թեպետ իր ընտրական ցուցակներում ընդգրկել էր 25 տոկոսից ավելի կին»,- նշեց Թ. Հովնաթանյանը, ավելացնելով, որ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերող առաջարկը տարածվում է նաև համամասնական ընտրակարգով անցկացվող երևանի, Գյումրու և Վանաձորի ՏԻՄ ընտրությունների վրա: Նշվեց նաև, որ խումբն առաջարկում է ընդլայնել այդ ցուցակը՝ անցկացնելով համամասնական ընտրակարգով ընտրություններ այլ քաղաքներում և խոչորացված համայնքներում:

Գեոգրեային թեմատիկ խումբն առաջարկում է կիրառել նաև մեխանիզմներ, որոնք երաշխավորում են կուսակցությունների ցուցակներում սեռերի նշված համամասնության պահպանումը ընտրական գործընթացի բոլոր փուլերում և փաստացի ընտրված մարմնում: «Խոսքը ինքնաբացարկների գործելաճի մասին է, ինչի հետևանքով հանրության համար ոչ այնքան հասկանալի պատճառներով 2012-ին արդեն ընտրված շատ կանայք չմտան Ազգային ժողով: Առաջարկվում է կիրառել հետևյալ դրույթը՝ «Կուսակցությունների ցուցակներում ավելի պակաս ներկայացված թեկնածուի ինքնաբացարկի միջոցով մանդատից հրաժարվելու դեպքում նրա տեղը պետք է զբաղեցնի ցուցակում ընդգրկված ավելի պակաս ներկայացված սեռի հաջորդ թեկնածուն»,- եզրափակեց բանախոսը:

Հակափաստարկ

Կանանց մասնակցության խնդիրը չի կարող երկրորդական լինել



Լսումների ընթացքում հնչեց մի տեսակետ, ըստ որի կանանց հարցը իբր երկրորդական նշանակություն ունի և հեշտությամբ իր լուծումը կստանա, եթե մեր երկրում արդար ընտրություններ անցկացվեն: Այս տեսակետն առաջին անգամ չէ, որ բարձրածայնվել է Ընտրական օրենսգրքի շուրջ ծավալվող քննարկումների ընթացքում, ընդ որում, մասն ճորմը չունի արտահայտում նույնիսկ որոշ իրավապաշտպաններ:

Այս անգամ մասն կարծիք հայտնեց ՀԱԿ խմբակցության պատգամավոր Արամ Մանուկյանը, հորդորելով, որ հասարակական սեկտորը միանա ընտրությունների կեղծման դեմ ընդդիմության կողմից ներկայացվող պահանջներին և չվատնի իր ուժերը այլ «փոքր» խնդիրների, այդ թվում՝ կանանց մասնակցության խնդիր լուծման վրա: «Մի գնացեք ձեր փոքր առաջարկների հետևից, դրանք բոլորը կլուծվեն, ընտրությունները կեղծվելու դեմ պահանջները շատ ավելի առաջնահերթ են, միավորվեք դրանց շուրջ»,- հայտարարեց պատգամավորը:

Արծազանքելով այս դիտարկմանը՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի վարչության անդամ Անահիտ Աղոյանն իր ելույթում նշեց, որ այդ հարցը կարևոր է այնքանով, ինչքանով մենք այսօր ունենք քաղաքական մշակույթի փոփոխության կարիք:

«Ու թերևս հենց այդ պատճառով կարիք կա, որ կանայք լրացնեն խորհրդարանը, և մենք փոխենք մեր դիրքորոշումներն ու վերաբերմունքը քաղաքականության և քաղաքական արժեքների ու չափանիշների նկատմամբ»,- ասաց նա:

Նկատենք, որ արդարության պահանջների տարանջատումը կարևորի և ոչ այնքան կարևորի, հատկապես օրենսդիրների կողմից, անընդունելի է: Ինչ վերաբերում է արդար ընտրություններին, ապա աշխարհում քիչ չեն այն երկրները, որտեղ ընտրությունների արդյունքները կանխորոշված տակ չեն դրվում ընդդիմության կամ հասարակության կողմից, սակայն միշտ չէ, որ այդ ընտրությունների արդյունքում կանանց արդար ներկայացվածություն է ապահովված լինում ընտրված մարմնում: Իրականում, արդար ընտրությունների անցկացումն անշուշտ անհրաժեշտ պահանջ է ժողովրդավարության տեսանկյունից, սակայն ոչ բավարար կանանց պատշաճ մասնակցությունն ապահովելու առումով:

«Ձեռնուլեններ կան, տեղեր չկան»

Ժամանակին քվոտավորման անհրաժեշտության մասին խոսելիս կոլեգաներից մեկը նկատագրում էր իրավիճակը հայտնի անելու միջոցով. «Ավտոբուս մի կին բարձրացավ: Շուրջը նայեց. ազատ տեղեր չկային, բոլոր նստածներն էլ՝ բավական երիտասարդ տղամարդիկ: Մի քանի կանգառ կինը դեռ հույս ունեցր, որ գոնե մեկը իր տեղը կզիջի: Ի վերջո, որոշեց ակնարկել. «Հետաքրքիր է՝ այս ավտոբուսում գոնե մի ջենտլմեն չկա»: Ուղևորներից մեկը տեղից արձագանքեց. «Ձեռնուլեններ կան, տեղեր չկան»:

Նույնն էլ խորհրդարանում. տեղերի մեծ մասը զբաղեցրել են տղամարդիկ, ովքեր դժվարությամբ են համակերպվում գեոգրեային արդարության պահանջի հետ, հատկապես եթե դրա մասին ոչ ոք չի հիշեցնում: Մինչդեռ ընտրողներն այս հարցում շատ ավելի առաջադեմ են, քան քաղաքական գործիչները: Այսպես դեռ նախորդ ընտրությունների նախաշեմին արված սոցիոլոգիական հետազոտությունների տվյալներով՝ հարցվածների ամենավազմ 57%-ը դրական վերաբերմունք ուներ քաղաքական և պետական կառավարման տարբեր օղակներում քվոտայի սահմանման գաղափարին, ընդ որում՝ գեոգրեային քվոտայի օպտիմալ չափն օրենսդիր մարմնում, իրենց կարծիքով, առնվազն 30-40%-ի շրջակայքում պետք է լինի: Այսինքն՝ շարքային քաղաքացիները պատրաստ են խորհրդարանում տեսնելու ավելի շատ կանանց, քան առաջարկում են կուսակցությունները իրենց ցուցակներում: Ի դեպ, ըստ հարցվածների՝ կանանց նկատմամբ խտրականությունը առավել արտահայտվում է քաղաքականության մեջ, ընտրությունների համակարգում:

Չայն բազմաց

Քանի՞ կին դեմ է լինի կուսակցությունների ցուցակներում. արտահայտվում են երիտասարդները

Քաղաքական տարբեր հարթակներում մեր Ընտրական օրենսգրքի նախագծի շուրջ այս օրերին ընթացող բուռն քննարկումներից ամենամեծ ջանքն անում են քաղաքականությանը հետաքրքրվող երիտասարդները: Մենք փորձեցինք պարզել նրանց տեսակետները Ընտրական օրենսգրքի այն դրույթների և առաջարկների վերաբերյալ, որոնք կարգավորում են կանանց ներկայացվածությունը կուսակցությունների ընտրական ցուցակներում և Ազգային ժողովում: Խոսքը, մասնավորապես, կուսակցությունների ցուցակներում ընդգրկվող կանանց թվի, ինչպես նաև ինքնաբացարկների մասին է:

Հայկ Թորոյան, 27 տարեկան. «Ներկայումս պետք է մինիմում 30% կին լինի նախընտրական ցուցակներում, հետագայում, երբ Հայաստանը դեմոկրատական երկիր դառնա, դա կարելի է վերացնել և հավասար մրցակցություն լինի: Բայց քանի դեռ չկա դա, պետք է այսպես կոչված «դրական խտրականություն» ցուցաբերել՝ կանանց աջակցելու նպատակով: Կոռու վայր դրած մանդատը պետք է փոխանցվի հաջորդ կնոջը, որովհետև հաճախ ձևական է լինում կանանց ներկայացվածությունը ցուցակներում, հետո նրանց ստիպում են, որ մանդատը վայր դնեն, և այն անցնում է տղամարդկանց»:

Էսթեր Պետրոսյան, 25 տարեկան. «Տարբերակում չպետք է դնել սեռերի հարցում: Պետք է լինեն հավասար պայմաններ, ու ուժեղագույնները լինեն առջևում՝ անկախ սեռից: Ու որ պայմանները հավասար լինեն, կանայք ամենուր հաստատ ավելի շատ կլինեն: Տոկոսների հավասար բաժանումը ինձ համար արհեստական է ու ինչ-որ տեղ անընդունելի, նաև անարդար է ն տղամարդկանց նկատմամբ, ովքեր ավելի արժանի կլինեն են կանանցից, որոնք իրենցից առաջ կլինեն մենակ կին ծնված լինելու պատճառով ու ոչ սեփական արժանիքներից և ունակություններից ելնելով»:

Լուսինե Գևորգյան, 31 տարեկան. «Կանայք պիտի կազմեն 50%, և վայր դրված մանդատը պետք է

տրվի հաջորդ կնոջը՝ բախնա ապահովելու համար»:

Լիլիթ Ալեքսանյան, 27 տարեկան. «Կուսակցությունների ցուցակները չպետք է կազմվեն կին կամ տղամարդ առաջնորդությամբ, այլ պետք է հաշվի առնվեն անձի գիտելիքներն ու համապատասխանությունը տվյալ ցուցակում հայտնվելուն: Սակայն եթե օրենքը սահմանում է, որ ընտրական ցուցակում այսինչ տոկոս պետք է կազմեն կանայք, ապա հենց այդքան տոկոս էլ պետք է կազմեն պատգամավոր դարձած կանայք»:

Ղափիթ Ասատրյան, 27 տարեկան. «Կանայք պետք է կազմեն առնվազն 30%, ցանկալի է՝ 40-50%, բայց ընտրվելու դեպքում մանդատը վայր չդնեն, շարունակեն: Թե չէ նրանց տեղը մանդատ են ստանձնում տղամարդիկ, ինչը բավականին տհաճ պրակտիկա է»:

Լիլի Մինասյան, 25 տարեկան. «Ներկա դրությամբ պետք է ապահովել 50%: Սկզբնական շրջանում, իհարկե, արհեստականորեն կլինի դա, բայց հարկավոր է, որ հասարակությունը սովորի տեսնել կանանց տարբեր տեղերում: Այնուհետ, երբ մեր հասարակությունը սովոր լինի տեսնել կանանց քաղաքականությունում, դրանից հետո տոկոսը կարող է աճել կամ նվազել, արդեն դա կախված կլինի կանանց պատրաստվածությունից»:

Լիլի Մինասյան, 25 տարեկան. «Ներկա դրությամբ պետք է ապա-



հովել 50%: Սկզբնական շրջանում, իհարկե, արհեստականորեն կլինի դա, բայց հարկավոր է, որ հասարակությունը սովորի տեսնել կանանց տարբեր տեղերում: Այնուհետ, երբ մեր հասարակությունը սովոր լինի տեսնել կանանց քաղաքականությունում, դրանից հետո տոկոսը կարող է աճել կամ նվազել, արդեն դա կախված կլինի կանանց պատրաստվածությունից»:

Հայկ Մարտիրոսյան, 30 տարեկան. «Ուզում եմ Աժ-ում տեսնել 50% կին: Իսկ մանդատը վայր դնելու դեպքում այն պիտի փոխանցվի կին գործչի, պարզ տրամաբանությամբ՝ հավասարը հավասարի»:

Մարատ Ստեփանյան, 24 տարեկան. «Իրական հավասարությունը կլինի 50%-ի դեպքում, բայց հավաստ չի գալիս Հայաստանի դեպքում, ապա կպատասխանեմ 30%: Էլի մեծ առաջընթաց կլինի, եթե այդքանն ապահովվենք»:

Վարդան Ավանեսյան, 27 տարեկան. «Կանանց ներգրավվածությունը քաղաքականության մեջ, առավել ևս կուսակցական ընտրական ցուցակներում նրանց թիվը պետք է գո-

յան բնական ձևով: Անիմատ է արհեստականորեն կանանց թիվը մեծացնել կամ որոշակի թիվ դնել միայն ցույց տալու համար, որ կանայք կան ցուցակում: Եթե հասարակության մեջ կանայք էնքան ակտիվ են, որ զբաղվում են քաղաքականությամբ ու լրջորեն հաջողություն են գրանցում, էր արդյունքը, համոզված եմ, որ պետք է արտացոլվի նաև ցուցակներում: Պատվությունը նույնպես պետք է արտացոլվի: Կարևորը անձն է ու պետք չի տոկոսները սահմանել ըստ սեռի»:

Մանե Սարգսյան, 26 տարեկան. «Ես չեմ ցանկանում, որ տոկոսային սահմանումներ լինեն: Իսկ մանդատը վայր դնելու դեպքում այն պետք է փոխանցվի հաջորդ անձի՝ առանց սեռային խտրականության»:

Էդգար Բաբայան, 33 տարեկան. «Դժվարանում եմ կոնկրետ տոկոս ասել, բայց որ ներկայիս թվից մի քանի անգամ ավելի պիտի լինեն, դա միանշանակ է: Այսօրվա Աժ-ի կանանցով հիմնադրված քիչ առիթ ունեն, բայց առհասարակ քաղաքականության մեջ գտնվող կանայք, ակտիվիստները ինձ շատ մեծ հույս են ներշնչում»:

